ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի N 1341-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9/72 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Թաթուլ Աշոտի Ջանոյանի /որակավորման վկայականի համար 0310՝ տրված 05.12.2013թ./ կողմից 03.10.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023XDNLCV ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Սուրեն Վալոդի Շուքուրյանի դիմումը՝ Գավառ քաղաք Ա. Ոսկանյան փողոց թիվ 9/72 հասցեում իր կողմից ինքնակամ կառուցված 92.3 քմ. արտաքին /78.9 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ***որոշում եմ***

1. Գավառ քաղաք Ա. Ոսկանյան փողոց թիվ 9/72 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00779 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 92.3քմ. արտաքին /78.9 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Գավառ քաղաք Ա. Ոսկանյան փողոց թիվ 9/72 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00779 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 92.3 քմ. արտաքին /78.9 քմ. ներքին / մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց թիվ 9/72 ավտոտնակ հասցեն:

5. Օրինականացված 92.3 քմ. արտաքին /78.9 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Սուրեն Վալոդի Շուքուրյանին:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի N 1342-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ «ԿՌՈՒԲՆԿ-96» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ, ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29 ԱՊՐԻԼԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 788-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.04.2021թ. N 698-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 27.08.2021 թ-ի 1383-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման, հիմք ընդունելով «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, Գավառ համայնքի ք.Գավառ Ազատության փողոց թիվ 16ա հասցեի սեփականատեր /սեփ. վկայական N 2729751, տրված 06.12.2005թ./ «Կռունկ-96» ՍՊԸ-ի սեփականատեր Արթուր Նորիկի Խաչատրյանի /ծնված 05.06.1970թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և նկատի ունենալով, 0.09520հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. ՈՒԺը կորցրած ճանաչել Գավառի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 29-ի թիվ 788-Ա որոշումը:

2.Հաստատել Թիվ 2729751 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն պետական գրանցում ստացած Գավառ համայնքի ք. Գավառ Ազատության փողոց թիվ 16ա հասցեում գտնվող հողամասի սահմանները կից ներկայացված հատակագծի՝ հաստատված համայնքի ղեկավարի կողմից,

0.09520 հա մակերեսով՝ ճանաչելով «Կռունկ-96» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը՝ 0.09520 հա մակերեսի նկատմամբ որպես օրինական տիրապետվող գույք:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի N 1343-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Ա. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՆՈՒՇ ՆՈՐԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության 05 հունվարի 2022թ. 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի կողմից 02.10.2026թ. տրված N ԳՄ /21111-2026 տեղեկանքը՝ վերոնշյալ հասցեի ինքնակամ շինությունները սահմանված կարգով Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու մասին, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14092026-05-0025 վկայականը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց 50 հասցեի սեփականատեր Անուշ Նորիկի Մկրտչյանի /ծնված 09.01.1962թ./ դիմումը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև 0.10601 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց 50 հասցեում 2006-2010թթ. ինքնակամ կառուցված 38.3 քմ արտաքին /27.1 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը և 74.9 քմ արտաքին /55.5 քմ ներքին/ մակերեսով անասնաշենքը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 874 /ութ հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ, ընդամենը

113.2x874=99000 /իննսունինը հազար/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի N 1344-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ԹԻՎ 575-Ա ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 04-Ի ԹԻՎ 884-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԾԱՂԿԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 54 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻԱՍՆԻԿ ՍՏԵՊԿՈՅԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1328-Ն «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին որոշման; 18.05.2006թ. թիվ 912-Ն «Ինքնակամ կառույցն.երի օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» որոշման և 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու» 2387-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետի պահանջներով և Հիմք ընդունելով Միասնիկ Ստեպկոյի Գասպարյանի /ծնված 02.01.1967թ-ին/ դիմումը, հաշվի առնելով «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, որի համաձայն Գավառ համայնք Ծաղկաշեն գյուղի 3-րդ փողոց թիվ 54 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է /ծածկագիր 05-046-0111-0022/, ինչը փաստացի կազմում է 0.1 հա և հաշվի առնելով, որ 1992-2015թթ-ին կառուցված 296,3 քմ մակերեսով շենք-շինությունների կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ

և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գույքը որպես սեփական գույք տիրապետում է Միասնիկ Ստեպկոյի Գասպարյանը /ծնված 02.01.1967թ-ին/

1. Ուժը կորցրած ճանաչել Գավառ համայնքի ղեկավարի 26 մարտի 2026 թվականի թիվ 575-Ա և 04 հունիսի 2026 թվականի թիվ 884-Ա որոշումները:

2. Ծաղկաշենի 3-րդ փողոց թիվ 54 հասցեում գտնվող 0,1000 տնամերձ հողամաս, նրա վրա 1992 թվականին կառուցված 137,7 քմ մակերեսով բակելի տունը և 1992թ-ին կառուցված 58.3 քմ մակերեսով անասնաշենքը՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով, համարել Միասնիկ Ստեպկոյի Գասպարյանի /ծնված 02.01.1967թ-ին/ սեփականությունը:

3. Ծաղկաշենի 3-րդ փողոց թիվ 54 հասցեում գտնվող, 2012 թվականին կառուցված 26.3 քմ մակերեսով անասնաշենքը, 2015 թվականին կառուցված 53,9 քմ մակերեսով ավտոտնակը և 2015 թվականին կառուցված 20.1 քմ մակերեսով բակելի տունը ճանաչել ինքնակամ,

4.Բնակելի տանը տրամադրել Գավառ համայնք գյուղ Ծաղկաշեն 3-րդ փողոց թիվ 54 տուն հասցեն:

5. Շենք շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի N 1345-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 142 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԾԱԾԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 29.07.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023NBUJHE ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Արմենուհի Գուրգենի Հայրապետյանի դիմումը՝ Գավառ քաղաք Ազատության փողոց 1-ին նրբանցքի 1-ին փակուղի թիվ 142 հասցեում իր կողմից ինքնակամ կառուցված 45.8 քմ. արտաքին /40.1 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը, 2.6 քմ մակերեսով ծածկը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող

հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.00341 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ***որոշում եմ***

1. Գավառ քաղաք Ազատության փողոց 1-ին նրբանցքի 1-ին փակուղի թիվ 142 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00341 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 45.8 քմ. արտաքին /40.1 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը, 2.6 քմ մակերեսով ծածկը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Գավառ քաղաք Ազատության փողոց 1-ին նրբանցքի 1-ին փակուղի թիվ 142 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00341 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 45.8 քմ. արտաքին /40.1քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը, 2.6 քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ազատության փողոց 1-ին նրբանցքի 1-ին փակուղի թիվ 142 ավտոտնակ հասցեն:

5. Օրինականացված 45.8 քմ. արտաքին /40.1 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը, 2.6 քմ մակերեսով ծածկը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Արմենուհի Գուրգենի Հայրապետյանին:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ** **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2026 թվականի N 1346-Ա

«ԲԵՐԴԿՈՒՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24) կետով, «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման» կարգը հաստատելու մասին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26-ը մարտի 2020 թվականի N02-Ն հրամանի 21. կետով, ***որոշում եմ***

1. «Բերդկունքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար կայանալիք մրցույթին դիմորդների բացակայության պատճառով մրցույթը համարել չկայացած:
2. Հանձնարարել աշխատակազմին՝ «Բերդկունքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարել նոր մրցույթ::
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 14
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2026 թվականի N 1347-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Գ. ՆՈՐԱՏՈՒՍ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ 8/2 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՊԱՐԻՍՊԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 10 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 8 նիստի թիվ 200-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Լուսինե Նորիկի Սիրեկանյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված բնակելի տունը, պարիսպը օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 30082026-05-0005, տրված 30.08.2026թ./, ***որոշում եմ***

1.Գավառ համայնք գ. Նորատուս Գ. Գրիգորյան փողոց 8/2 բնակելի տուն հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 112.30 քմ արտաքին /76.20 քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը, 0.99 քմ մակերեսով պարիսպը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.00714 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար բնակելի տան, պարիսպի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 3084 / երեք հազար ութսունչորս/ ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 349400 /երեք հարյուր քառասունինը հազար չորս հարյուր / ՀՀ դրամ, բնակելի տան, պարիսպի համար առանձնացված 0.00714 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 792 /յոթ հարյուր իննսուներկու / ՀՀ դրամ, ընդամենը 56600 /հիսունվեց հազար վեց հարյուր / ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային

իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Լուսինե Նորիկի Սիրեկանյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Լուսինե Նորիկի Սիրեկանյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 15
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2026 թվականի N 1348-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ 19 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԾՐՈՒՆ ՄԻՍԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 07.10. 2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, 08.06.2026թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան փողոց 5-րդ անցուղի 19 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.09 հա, ինչը փաստացի կազմում է 0.09713 հա, որը Արծրուն Միսակի Հարությունյանին /ծնված 13.03.1975թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 266.70 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1962թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.09713 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան փողոց 5-րդ անցուղի 19 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Արծրուն Միսակի Հարությունյանի /ծնված 13.03.1975թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.09 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00713 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.09713 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 266.70 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1962թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան փողոց, 5-րդ անցուղի, 17/1 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 15
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2026 թվականի N 1349-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 2-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ 12 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՂԱՄ ՎԱՀՐԱՄԻ ԻՍՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 06.10.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 4-րդ նրբանցք 2-րդ անցուղի 12 հասցեի գույքի նկատմամբ ժառանգ /վկայագրեր՝ տրված 30.09.2026թ. և 02.10.2026թ./ Գեղամ Վահրամի Իսոյանի /ծնված 09.12.1965թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 4-րդ նրբանցք 2-րդ անցուղի 12 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.10637 հա, որը Գեղամ Վահրամի Իսոյանին /ծնված 09.12.1965թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 134.00 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1960-1976թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.10637 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ

հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 4-րդ նրբանցք 2-րդ անցուղի 12 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Գեղամ Վահրամի Իսոյանի /ծնված 09.12.1965թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.08 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.02637 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.10637 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 134.00 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1960-1976թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. 2010-2017թթ-ին կառուցված 110.50 քմ ընդհանուր մակերեսով շինությունները ճանաչել որպես ինքնակամ շինություններ:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց, 4-րդ նրբանցքի 2-րդ անցուղի, 12 հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 15
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2026 թվականի N 1350-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ N 1171-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 -րդ և 34 -րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 20.01.2026թ արտահերթ նիստի թիվ 4 -Ն որոշման պահանջները և Գավառի համայնքապետարանի սոցիալական աջակցության տրամադրման ենթահանձնաժողովի 31.08.2026թ. եզրակացությունը, ***որոշում եմ***

«Սնունդի փաթեթ տրամադրելու մասին» Գավառ համայնքի ղեկավարի 31 օգոստոսի 2026 թվականի N 1171-Ա որոշման երկրորդ պարբերությունը լրացնել ներքոնշյալ անվանացանկով

1.Գրիգորյան Անահիտ Սամվելի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
2.Դարբինյան Սաշա Միսակի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
3.Հարությունյան Բալասան Մերուժանի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
4.Քոչարյան Թամարա Հարությունի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
5.Ավետիսյան Անահիտ Արտավազդի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր

6.Գևորգյան Ռախի Վաչագանի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
7.Սարգսյան Անուշ Արամայիսի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
8.Կիրակոսյան Ալվարդ Հրաչի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
9.Մովսեսյան Էմմա Սերգեյի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
10.Տուդոյան Լաուրա Հովհաննեսի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
11.Միքայելյան Կարինա Վաղարշակի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
12.Մկրտչյան Անժիկ Պարույրի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
13.Դադոյան Ալիտա Միզաջանի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
14.Ղազարյան Ալվարդ Կարոյի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
15.Պետրոսյան Իրինա Մանվելի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
16.Մկրտչյան Նարինե Մարտիկի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
17.Թադևոսյան Էդգար Դանիելի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
18.Հովսեփյան Աշոտ Սերյոժայի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
19.Գասպարյան Ջուլետա Հարութի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր
20.Մաթևոսյան Սոնյա Ջեվանշիրի ութսուն / ՀՀ դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր

21.Գալոյան Սվետլանա Մկրտչի ութսուն / ՀՀ դրամ — 19980 /տասնինը հազար ինը հարյուր

22.Օհանյան Ալիտա Վաղարշակի ութսուն / ՀՀ դրամ — 19980 /տասնինը հազար ինը հարյուր

23.Գյոզալյան Ալինա Գագիկի ութսուն / ՀՀ դրամ — 19980 /տասնինը հազար ինը հարյուր

24.Մուրադյան Հարփիկ Արսենի ութսուն / ՀՀ դրամ — 19980 /տասնինը հազար ինը հարյուր

25.Վարդանյան Մեխակ Եղիազարի ութսուն / ՀՀ դրամ — 19980 /տասնինը հազար ինը հարյուր

Ընդամենը՝ 499 500/չորս հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 15
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2026 թվականի N 1351-Ա

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ 23 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏԱԿ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 18.09.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, 17.09.2026թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, <<Հայր և որդի Դավոյաններ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան փողոց 5-րդ անցուղի 23 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.10 հա, ինչը փաստացի կազմում է 0.09422 հա, որը Արտակ Պատվականի Թովմասյանին /ծնված 13.07.1976թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 296.0 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1960-1970թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.09422 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան փողոց 5-րդ անցուղի 23 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Արտակ Պատվականի Թովմասյանի /ծնված 13.07.1976թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.09422 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 296.0 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1960-1970թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Հ. Աբրահամյան փողոց, 5-րդ անցուղի, 23 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 15
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
15 հոկտեմբերի 2026 թվականի N 1352-Ա

ԲԱԶԱԼՏՇԻՆ ԱԿ-ԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Իրավաբանական անձ Բազալտշին ԱԿ-ն , ՀՎՀՀ 08400345, Կոտայքի մարզ, Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի 4 արտադրամաս, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2026 թվականի սեպտեմբերի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ»ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարների գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող՝ ՀՀ ՀՔԲ-ի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման ու գնահատման տվյալների՝ VAZ 21214 334LL01, VAZ 21214-126-20 334AA01 պետհամարանիշի փոխադրամիջոցները, հանդիսանում են Բազալտշին ԱԿ-ի սեփականությունը:

Փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 72000/ յոթանասուներկու հազար / ՀՀ դրամ, ինչը սահմանված ժամանակահատվածում չի վճարվել, իսկ Բազալտշին ԱԿ-ի կողմից գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 24600/ քսանչորս հազար վեց հարյուր/ ՀՀ դրամի չափով:
2026 թվականի սեպտեմբերի 25-ին «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Գավառի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հոկտեմբերի 15-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: 15.10.2026թ. վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Բազալտշին ԱԿ-ի ներկայացուցչի բացակայությամբ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:
Համաձայն Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ

գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար հարկային օրենսգրքի 11-րդ բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:
Համաձայն Հայաստանի ՀանրապետությանՀարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասին՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և/կամ/ դրանց բարելավումները: Նույն օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային օրենսգրքի 11-րդ բաժնի կիրառության իմաստով, հողամասերը՝ ըստ նպատակային և գործառնական նշանակության , սահմանվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ, իսկ հողամասերի բարելավումներ են համարվում հողամասերում կառուցված հետևյալ ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցները: Անշարժ գույքի հարկը վճարվում է համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-376-Ն օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների՝ 2025 թվականի հունվարի 1-ից հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով: ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծած հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված) հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված(պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:
Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է անշարժ գույքի հարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով.ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ և 398-րդ, «Վարչարարաության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ

1. Բազալտշին ԱԿ-ից հօգուտ Գավառ համայնքի բյուջե գանձել ընդամենը 96600 /իննսունվեց հազար վեց հարյուր / ՀՀ դրամ որպես VAZ 21214 334LL01, VAZ 21214-126-20 334AA01 պետհամարանիշի փոխադրամիջոցների գույքահարկի գումար, ներառյալ տույժերը:
2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:
4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԳՐԻԳՈՐ ԲՈՇՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 15
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
15 հոկտեմբերի 2026 թվականի N 1353-Ա

«ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊԸ-ԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Իրավաբանական անձ «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 02307422,Երևան, Շենգավիթ, Մանանդյան, 41/1, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2026 թվականի սեպտեմբերի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ»ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարների գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անշարժ գույքի հարկով հարկվող օբյեկտ համարվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրած շենքերի և շինությունների (հողերի կամ հողամասերի) հաշվառման և գնահատման տվյալների՝ Գավառ համայնքի 05-025-0701-0553 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը, հանդիսանում է «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊԸ-ի սեփականությունը:
Անշարժ գույքերի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 6200/վեց հազար երկու հարյուր/ՀՀ դրամ, ինչը մինչև 2024թ ավարտը չի վճարվել, իսկ «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից նշված ժամանակահատվածի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 2700/տասնյոթ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամի չափով:
